

Ա. ՉԱՏՈՒԹԻՒՆԸ չափու
համար չէ որ կը հրատա-
րակուի:

Ա. ՉԱՏՈՒԹԻՒՆԸ տունէ
տուն ու քաղաքէ քա-
ղաք շրջելով դրամ կամ
բաժանորդ չի մուրար:

ՀԱՅ Ժողովրդի յառաջ-
դիմութիւնը մեր շահն
է, իսկ Հայոց ազատու-
թիւնը Ա. ՉԱՏՈՒԹԻՒՆԻ
նպատակն է...

Ազատութիւն

Կ Ի Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս Ս

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Circulation
larger than
any other
Armenian paper
in the U. S.

Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 56

ՆԻՒ ԵՈՐԳ, 1892, ՅՈՒՆԻՍ 15

ԳԻՆ ՀԻՆԳ ՍԷՆԹ

Ն. Ա. Մ. Ա. Կ

Տ. Յ. ՍԱՐԱՅԵԱՆԸ

Կարելի չէ գրչով թարգման
կազմել այն զգացման որով հա-
մակեցայ երկու օր առաջ երբ ոտը
դրի Ս. Էջմիածնի հողերուն վրայ:
Անցելոյն տխուր կնիքն դեռ զը-
րոշմունք է հոս ամէն կողմ: Նախ-
նեայ ոգին կարծես ահաւոր Մա-
սիսի բարձունքներէն բողբոջ կը
բառնայ այն այցելուաց դէմ որք
իրենց բնակութիւնն Հայաստանէ
դուրս՝ օտար աստղերու ներքեւ
են հաստատած: Այն, ինչէ՛ր
չեն ներշնչեր մարդուս այս սրբա-
զան վայրեր որք գիտեն միայն մար-
դուս արտին հետ խօսիլ: Հողը,
քարը, օդն ու մթնոլորտը Հայու-
թիւն կը բաւեն հոս: Ո՛հ, պաշ-
տելի վայրեր, որք մարդկութեան
խանձարուն ու Հայութեան որո-
րանն ու փառաց կեդրոնն են եղած
անյիշատակ դարերու մէջ:

Մի Հայ արդարեւ կրնայ մը-
խիթարուիլ կաթողիկոսական ընտ-
րութեան առթիւ հոս տիրող ոգե-
ւորութիւնն ու շարժումը տես-
նելով: Հայն դիւանագիտութենէ
զուրկ կարծող մարդիկ հոս կըր-
նան իրենց համոզումն յեղաշը-
րել, ու խոստովանիլ թէ Հայկազ
զաւակներն ինքէ ունենան ազատ
ու ընդարձակ ասպարէզ գործե-
լու, քաղաքակրթեալ ազգաց մե-
ծադոյններուն հետ անգամ մը ձե-
լու դիրքին կրնան հասնիլ շուտ:
Թուրքիայի և Ռուսիոյ այլ և
այլ քաղաքներէ հասնող պատգա-
մաւորաց թիւն վաթսուսն է այժմ,
սոքա մեծաւ մասամբ նշանակա-
ծ են կաթողիկոսական առաջին ընտ-
րելին յանձնին իրիմեան Հայրիկի,
բայց երկրորդ ընտրելին համար
համաձայնութիւն գոյացած չէ
դեռ Ռուսահայ և Տաճկահայ պատ-
գամաւորաց մէջ:

Ծաւ է տեսնել թէ Թրքահայ
պատգամաւորներու մէջ կան կարգ
մը Ազգականներ, որոց անուններն
հարկ չեմ տեսներ յիշել հոս, իսկ
մեր Ռուսահայ եղբարք զայրոյթ
կըզգան Ազգեան սրբազանի ա-
նունն լսուած ժամանակ: Սոքա
համոզուած են սա ճշմարտու-
թեան թէ մեր Կ. Պոլսոյ Պատրի-
արքն իւր անփորձութեամբ ամէն
բան տակն ի վրայ ըլլաւ և մոռ-
նալով երկնային ամենակարողը,
երկրային վեհափառին մաղթանք-
ներ մատուցանելով կանցունէ իւր
օրեր:

Երէկ երեկոյ աշխարհական
պատգամաւորները մի ժողովը ը-
րին, յորում Ազգեան սրբազանի
անունն քառանկէ ցանկէն անգամ
դուրս ձգուեցաւ: Սա ցոյց կու-
տայ թէ անյաջող պիտի մնան այն
անձանց ջանքերն որք մասնաւոր
հրահանգ ընդունած են ընտրել
Ազգեան և իզմիրեան սրբազան-
ներն:

Այս սողեր գրած ատեն լուր
ստացայ թէ Օրմանեան սրբազան,
որ կըսպասուէր անհամբեր, հա-
սած է վերջապէս: Նորին սրբազ-
նութեան կընկերանայ եղբր Մեծ.
Յովհաննէս Էֆ. Կիւլպէնկեան:
Մեծ յոյս կայ որ Գեր. Օրմանեան
սրբազան իւր ազատ ու խոհուն
ընտրութեամբ ձայն պիտի տայ
ընդհանուր ազգի փափաքանաց
որ է տեսնել զՀայրիկ Ս. Լուսա-
ւորչի գահուն վրայ բարձրա-
ցած:

Կարնոյ, Մշի, Վանայ, Տիգ-
րանակերտի և Եդեսիոյ պատգա-
մաւորները չեն եկած: Տիգրանա-
կերտէն իրիմեան Հայրիկի համար
քուէ զրկուած է. այս ձայն օգ-
տակար է միայն քառանկէ ցան-
կին մէջ, բայց այդ ցանկէն առա-
ջին ընտրելին անուանելու համար
կամ պատգամաւորն ներկայ գըտ-
նուելու է և կամ իւր ձայնը ու-
րիշ տալու է:

Այսօր Ս. Սինոդն ու Ռուսա-
հայ պատգամաւորք մտադիր են
մի ժողովը կազմել: Սոքա կաշ-
խատին քառանկէ ցանկին մէջ մի
Ռուսահայ եպիսկոպոսի անուն ևս
դնել, բայց կարելի չէ գուշակել
թէ պիտի յաջողին կամ ոչ:

Ոգեւորութիւնն մեծ է յոյժ:
Դիւեր ցերեկ պատգամաւորներն
իրարու այցելելով, զիրեար տես-
նելով ու համոզելով կըրաղին:
Բացի պատգամաւորներէ անթիւ
այցելուներ կան տեղա, ինչպէս
նաեւ Ռուսական Լրագիրներու
Թղթակիցներ ու խմբագիրներ:
Հարկ չէ ըսել թէ հոս են նաեւ
Մշակի, Նոր Դարի և Արձագանքի
պատուարժան խմբագիրներն:

Պատիւ ունեցած լինելով այ-
ցելել Տեղապահ սրբազանն, Ս.
Սինոդի անդամներն և այլ, կըր-
ցած եմ սա համոզումն դոյացնել
թէ Վշակեաններն միակ Սեդ-
րակեան սրբազանն կուզեն դնել
քառանկէ ցանկին մէջ, իսկ Ս.
Սինոդն ու մնացեալք այսու գոհ
լինիլ չեն ուզեր: Յաւալի է տես-
նել որ Ռուսահայ և Թրքահայ պատ-
գամաւորք իրարու վրայ վստա-
հութեամբ չեն նայիր: Ռուսահայք
հոգեւորականները միայն վստա-
հութեամբ չեն նայիր: Ռուսահայք
աւելի պարզ են և անկեղծ կը
խօսին, իսկ վերջինք ծածկամիտ
են յոյժ, և այդ ծածկամտութեան
հետ ոմանք կեղծիք ալ կը խառ-
նեն:

Վերջերս լուր ելած թէ Արաքս
գետը յորդած լինելով 14 նորեկ
պատգամաւորներ կըրցած չեն գե-
տի աստի կողմն անցնիլ, բայց յե-
տոյ ժխտուեցաւ այս լուր: Կը
կարծուի թէ Հայաստանի կեդրո-
նական քաղաքները պատգամա-
ւորներն արգելուած են իշմիրեան
գալ:

Յ. ՍԱՐԱՅԵԱՆ

1892 Մայիս 14
Էջմիածին

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Երեւան, Մայիս 21

Ի հարկէ հեռագիրն աւետած
է ձեզ թէ իրիմեան Հայրիկ ա-
ռաջին ընտրելի անուանուեցաւ մի-
աձայն հաւանութեամբ: Նորին
Ամենապատուութիւնն ստացաւ 72
քուէ, և 14 քուէներ ևս նամա-
կաւ՝ որք քառանկէ ցանկին հա-
մար միայն կըրցին գործածուիլ,
որպէս օրէն է: Այս լուրն փայլա-
կի արագութեամբ տարածուեցաւ
ամէն կողմ: Հայ լրագրաց թղթ-
թակիցք ու խմբագիրք այս լուր
հեռագրեցին ընդ փոյթ իրենց
թերթերուն՝ աւետելու Հայ ազ-
գին թէ իւր սիրած ու պաշտած
եկեղեցականն ընտրուած էր Ս.
Լուսաւորչին յաջորդ:

Այս ընտրութեան մէջ ոգե-
ւորութիւնն ի հարկէ մեծ եղաւ
յոյժ, և ընտրութեան մանրա-
մանտութիւնն խիստ շատ: Ա. ՉԱ-
ՏՈՒԹԻՒՆԻ դերը չի ներքեւ ան-
շուշտ արձագանք տալ այս ամէ-
նին, բայց բոլորովին չի զրկելու
համար ձեր ընթերցողներն՝ հա-
մառօտ նկարագիր մը կը յղեմ
ներկայիս:

Մայիս 15ին երբ սենեկէն դուրս
եկայ առաւօտուն կանուխ, վան-
քին գաւթեղ արդէն բռնուած գը-
տայ խուռն բազմութեամբ: Բացի
հետաքրքիր և այցելու անհուն
բազմութենէն՝ շատ մը նշանաւոր
անձեր ևս ներկայ էին: Տիգրանէն
եկած էր փոխարքայի ներկայա-
ցուցիչն, Երեւանէն և Վաղարշա-
պատէն բազմաթիւ պաշտօնական
անձինք, որոց մէջ կրնայ յիշա-
տակութեան արժանի սեպուիլ
Մեծարդոյ Վ. Գեղամեան քաղա-
քապետ և Քանաչեան կառավարիչ
Երեւանի. այս վերջինս որ պատ-
կառելի մի անձ է, կը հսկէր ժո-
ղովրդի կարգապահութեան վրայ:

Ժամը 9 էր երբ Եկեղեցւոյ
զանգակն հնչել սկսեց, որով ան-
միջապէս յետոյ հոգեւորական ու
աշխարհական պատգամաւորք վե-
հարանէն դուրս ելան Եկեղեցի
երթալու համար, ուր երբեք ունե-
տի ընէին աշխարհականք՝ խղճի
մտօք քուէ տալու համար: Սոցա
առջեւէն կը քալէր տեղապահ Սըր-
բազանն իւր պարթեւական հա-
սակաւ ու փառաւոր դիմօք: Նո-
րին Սրբազնութեան ետեւէն զոգ-
զոյց կերթային Ս. Սինոդի ան-
խարհական պատգամաւորներն:
Երբ սա թափոյն կանցնէր խուռն
բազմութեան մէջէն, շատեր Հայ-
րիկ լուսանկար պատկերներն օ-
գին մէջ բարձրացնելով աղաղա-
կել սկսեցին ձեռքէն Հայրիկ, կեց-
ցէ իրիմեան՝ ասոր հետեւեցաւ
բոլոր ժողովուրդն որ որոտըղոստ
կեցցէներով օգը գողդեց: Կեցցէ-
ներ լսուեցան նաեւ պատգամա-
ւորաց ու Սինոդականներուն հա-
մար: Հարկ է յիշել նաեւ թէ շատ
մը ցոյցեր ևս եղան Ազգեան սրբ-

բազանի 7 էմ, որոյ անունն կը
ցանկային ոմանք դնել քառանկէ
ցանկին մէջ:

Եկեղեցին լեցուած էր խուռն
բազմութեամբ, որ գեփիւռի առջև
տատանող ցորենի հասունեցած
արտերուն պէս տատանիլ սկսեց,
երբ պատգամաւորք Եկեղեցիէն
ներս մտան: Ետեւ Ս. Պատարագի,
որոյ պատարագիչն էր Աղուանեան
Սրբազանը, պատգամաւորք իրենց
հանգիստաւոր ուխտն կատարեցին
առաջի Աստուծոյ և պատրաստուե-
ցան արտի մտօք քուէարկել այս
կարեւոր ընտրութեան մէջ: Հոս
հարկ է յիշել թէ այս երբեք ը-
նտրեան աշխարհականներն էին
միայն, վասն զի Եկեղեցականք ի-
րենց ձեռնադրուած ատեն արդէն
երբեք ըրած լինելով՝ կրկին ան-
գամ երբեք չեն ընէր որ և է պա-
րագայի տակ Հայաստանաց Ս.
Եկեղեցւոյ օրինաց համաձայն:

Եկեղեցական պաշտամունք
վերջանալէ յետոյ ժողովուրդը
դուրս ելնել սկսեց: խօսակցու-
թեան նիւթն էր օրուան տաք
խնդիրն որոյ մէջ կը յեղյեղուէր
միշտ իրիմեանի անունն գովեստ-
ներու և կեցցենքերու հետ: Հայ
աշուղներն որք Ռուսահայոց այժ-
մեան գուսաններն են, իրենց քե-
նարի թրթրիչ թելով Հայրիկ կը
գովաբանէին «Հայրիկ Բան» նու-
ազելով ու երգելով ամէն կողմ:

Նոյն երեկոյ պատգամաւորաց
ժողով գումարուեցաւ քառանկէ
ցանկի մասին հասկացողութեան
մը գալու համար: Թրքահայ պատ-
գամաւորներէ շատեր կուղէին Ա-
զգեան սրբազանն դնել ցանկին
մէջ, բայց Ռուսահայք բոլորովին
հակառակ էին ասոր: Սա խնդիր
քաղաքակրթեամբ լուծելու համար,
Ռուսահայք վարպետ փրթեցան,
և առանց ու է անհատի զգացում-
ներն վիճաւորելու դուրս ձգե-
ցին Կ. Պոլսոյ պատրիարքի անու-
նը, զոհելով իրենց կողմանէ տե-
ղապահ Երեւանի սրբազանի և
Սեդրակեան եպիսկոպոսի անուն-
ներն: Հոս հարկ է յիշել թէ այս
եպիսկոպոսները հակառակ էին
արդէն իրենց անունն ցանկին մէջ
գրուելուն, ինչպէս որ յայտարա-
րած էին մի քանի անձնական տե-
սակցութեանց մէջ ի ներկայու-
թեան Տեղապ. Արձագանքի, Մշի
Ազգականի, Ա. Առաքելեանց և
Փրօկուրորի, բայց Ազգեան սրբ-
բազանի կուսակիցք անտեղեակ է-
ին բոլորովին խնդրոյ այս մասին:

Այս նախնական գումարման
մէջ երբ ջանքեր եղան Ազգեան
սրբազանի ի նպատակ, Ռուսահայք
մէկ կողմանէ սկսեցին հակառա-
կիլ և միւս կողմանէ պնդել յիշ-
եալ երկու եպիսկոպոսներու ան-
ունն վրայ:

Վերջապէս Ռուսահայք խնդի-
րն փակելու համար հաճութիւն
ցոյց տուին իրենց ընտրելիներու
անունն վրայ չի պնդել այլեւս,

պայմանաւ որ Թրքահայք ալ իրենց
ընտրելին զոհեն:

Սա որոշումն յաջող ելք մը
ունեցաւ և քառանկէ ցանկն ու-
րոշուեցաւ պատրաստել հետեւե-
ալ կերպիւ:

Իրիմեան Հայրիկ
Իզմիրեան Սրբազան
Խոյնեան Եպիսկ. Մխիթարեան
Երեւան Սահակեան, Ս.
Յակոբայ ուխտէն:

Հետեւեալ օրն, Մայիս 16, ա-
ռաւօտուն ժողովուրդը նորէն
խոնած էր. ցոյցերն աւելի ծայ-
րահեղ և աւելի յուզիչ էին: Հոյ-
րիկ անունն էր որ կը խօսէր բա-
լոր ժողովրդի արտէն: Վերջապէս
ժամն հասաւ ու պատգամաւորք
ժողովեցան Եկեղեցւոյ, ուր պի-
տի քուէարկուէր քառանկէ ցան-
կին համար:

Երբ ժողովը բացուեցաւ, Սըր-
բազան տեղապահն մաղթանք մը
յետոյ աղօթեց Վեհ. Չարի կեան-
քին համար, և օրուան պաշառնի
ճառ մ'ալ խօսելով բացաւ առ-
եան: Պ. Առաքելեան, խօսք տե-
նելով մի հակիրճ ճառ կարդաց,
որոյ վրայ անմիջապէս քուէար-
կութիւն կատարուեցաւ ու քա-
ռանկէ ցանկն պատրաստուեցաւ
հետեւեալ կերպիւ,

Իրիմեան Հայրիկ 77 քուէ
Մխիթարեան 72
Իզմիրեան 72
Տէր Սահակեան 71

Քուէարկութեան արդիւնքն դա-
հացուցիչ էր յոյժ: Հեռագիրք
սկսեցին տեղալ ամէն կողմ: Հա-
յրէն, Ռուսներէն և Վրացներէն
շատ մը լրագիրներու Թղթակիցք
հեռագրել սկսեցին այս լուր իրենց
լրագիրներուն: Ժողովուրդն զոհ
էր յոյժ, ու քառանկէ ցանկն գո-
հուսակցութեան արժանի. Բայց
մեր ուրախութիւն երկար չի տե-
ւեց, զի երեկոյեան ժողովը կազ-
մելով շատեր խորհուրդ յղացան
Իզմիրեան Սրբազանն առաջին
ընտրելի ընել:

Այս ժողովէ վերջ Վշակի
կուսակցութիւնն ի մի գումար-
ուելով երկար խորհրդակցութիւն
մ'ունեցաւ, և որոշուեցաւ որ եթէ
Ազգեանի կուսակցից փորձեր ը-
նեն զՀայրիկ սեւցնել, իրենք ընտ-
րութեան պահուն դուրս ելնեն
Եկեղեցիէն ու ընտրութիւնն բե-
կան: Իսկ հակառակ կուսակցու-
թիւնն՝ լսածիս նայելով, որոշած
էր որ եթէ գումարութիւնն մը
ենէն, գիմեն Սեհ. Սուլթանին ու
անոր միջամտութիւնն խնդրեն
Էջմիածնի գահէն բուժուելու հա-
մար:

Իրաց վիճակն խիստ ծանր էր
արդարեւ, ու խռովութիւններ կը
գուշակուէր շատերու կողմանէ:
Ոգեւորութիւնն ու յուզումն ան-
նկարագրելի էր վանքին մէջ:
Պատգամաւորներն մինչ կէս գի-
շեր արթուն էին դեռ, իսկ ա-
ստնցմէ շատեր մինչ առաւօտ ա-
ռիթ չունեցան բնաւ քնանալու,
ու բոլոր գիշերը անցուցին ելք մը
գտնելու համար խորհրդակցելով
իրարու հետ շարունակ:

(Մնացեալը յաջորդ թուով)

ԱՐԱՐԱՏ ԼՐԱԳՐԻ ԱՌԹԻԻ

Յունիս 15, 1892. Ն. Ե.

Յարգւոյ խմբագիր ԱՅՍՏՈՒԹԻԻՆԻ,

Հետեւեալ երկուորդ իւր ժամանակին զրկուած էր «Հայք» անուն Հայերէն թերթի՝ իրաւամբ հրատարակութեան համար:

Նորա խմբագրին զայն չը հրատարակել և զանց ընելն իւր կրած ոգւոյն և սկզբանց մի նոր ապացոյց մ'եւս համարելով, կը փութամ զայն Ձեզ զրկել և խնդրել որ հաճիք անկիւն մի շնորհել ձեր լրագրի մէջ:

Նիւ Եորք, Մայիս 26.

Յարգւոյ խմբագիր «Հայք»-ի, Ընթերցայ ձեր լրագրի Մայիս 15ի թուոյն մէջ «արտասահմանի Հայ թերթեր» վերնադրով յօդուած մը որու մէջ կը յիշէիք թէ 1891ին հրատարակուած «Արարատ» թերթին յայտնի պատճառօք չէր կրնար և չկրցաւ շարունակուիլ:

Յուզողութիւն մտաց «Արարատ»-ի բաղձաթիւ ընթերցողաց պարտ է ինձ աստ յայտարարել որ «Արարատ» մեռած է, որպէս կը ներկայացուի, այլ նորա հրատարակութիւնն ճիշդ է որ յայտնի և կրնամք աւելցունել բանաւոր պատճառներով ընդհատած է, Յունիս 15ի վեր և յաջորդ թիւոյն երեւան գտն ոչ այլ ևս ամիսներու, այլ շարաւիտութեան խնդիր է: Նա իւր ապագայ սխալակց միջոցաւ պիտի խօսի իրեն համար:

ՓԱՌՆԱԿ Մ. ԱՅՎԱՏԵԱՆ,

ՆԱՄԱԿ ՊՕՍԹԸՆԷ

Պոսթըն, Յունիս 14,

... Խմբագիր,

Ես ընդիվանեցի եւ, և երկու տարիէ ի վեր է Պոսթընի մէջ կը գտնուիմ, իմ գործատէրի՝ փէթ-րէսպուրիի սինկէրի մեքենայից ընդհանուր գործակալ Պ. Գորշի-նօֆի մօտ, որոյ հետ եմ եկել հոս ուղղակի Բէթրէսպուրիէն:

Ամերիկայի մէջ բարեկամ մը ունէի, որուն հասցէն վերջերս գրած լինելով՝ անցեալ շաբաթ օր զնացի զիմ բարեկամ տեսնելու որ կը բնակի ի Լին: Լինի մէջ բարեկամիս սենեակը նստած էինք երբ երկուստեք մը ներս մտնե-

լով տոմարակ մը տուաւ մեզ որով կը ծանուցանէր թէ այդ երեկոյ ժամը ճին Տըթ. Գարրիէլեան Նիւ Եորքէն եկած լինելով պիտի խօսէր Սիթի Հօլի գիմացի Հօլին մէջ:

Իմ բարեկամ քիչ տակէն ըս-կըսեց միմաւ, ասելով թէ «ես չեմ սիրում այդ ան... Ժի խօսքին լսելու»:

Երբ այս խօսքեր լսեցի շատ զարմացայ, բայց իմ բարեկամ շատ բաներ պատմեց ատոր վրայոք: Ես փափաք յայտնեցի երթալ, և իմ խօսք չի կոտրելով՝ ելանք հոն գնացինք ուր քառասունի չափ Հայեր կային: Քիչ մը վերջը Տօթ-թէօրը որ կարճահասակ սեւ մո-րուքով մարդ մ'էր, ներս մտնե-լով ուղղակի դնաց բեմը բազմե-ցաւ:

Տօթթէօրի խօսքերէն հետեւեալներն կը քաղեմ: Նախ ըսաւ թէ ինքն եկած չէր Օսմանեան տէրութեան կամ Քրդաց ու Չէր-քէզաց հարստահարութեանց վրայ խօսելու, այլ ուրիշ կէտի մը վը-րայ պիտի խօսէր, աւելցուց ըսե-լով թէ ինքն վաճէն նամակ մը առած էր օտարական անձէ մը որմէ տեղեկութիւններ խնդրած էր՝ այդ տեղի Հայոց վրայ, և այդ նամակի ըսածին նայելով վաճէն Հայերն ազգէկ դրութեան մէջ են եղեր և թէ մեր վաճեցի աղէա-յինք այժմ իրենց վիճակ բարե-տ-յինք գործը ձգած իրենք զի-րենք բարեգրելու կաշխատին: Ա-տենախօսը այս նամակին կրթնե-լով խրատեց որ մենք ալ այնպէս ընենք, յետոյ Մարգարան ան-ուամբ գիրք մը հանեց քովէն ու ըսաւ որ ամէն Հայ պէտք է հատ մը դնէ անկէ:

Եւ շատ մը ուրիշ բաներ ալ խօսելէ վերջ, Նիւ Եորքի Հայկա-կան Միութեան մէջ խօսող երի-տասարդի մը վրայ ճառել սկսեց, և ըսաւ թէ այդ երկուստեքը «Հիմայ լրագիր կը հրատարակէ, ես կը բողոքեմ այդ երկուստե-րի և անոր գրածներուն դէմ, և ինչ»: Երբ այս և այսպիսի խօ-սքեր կը խօսէր Տօթթէօրը, յան-կարծ ժողովրդի մէջէն երկուս-տարդ մը ոտքի ելնելով, կոչեց թէ «սուտ և զրպարտութիւն է որ կը խօսիք»: Այս պահուս ժո-ղովն խառնուեցաւ ու քիչ մնաց որ փորձանք մը պատահէր:

Այդ խօսող երկուստեքն էր Քարբերդցի Պ. Յովհաննէս Յովա-սափեան, ևս զինքն կը ճանչնամ Պօլիս շրջա տարի սենեակակց եմ

եղեր իրեն հետ և գիտեմ իւր ան-կեղծութիւնն ու քաջութիւնն:

Պ. Տօթթէօրը եկած էր միու-թիւն քարոզելու, բայց երկուս-տակութիւն ձգեց Լինի Հայոց մէջ, ինչպէս որ ըրած է եղեր Նիւ Եոր-քի, Ուսթըրի և ուրիշ քաղաքաց մէջ:

ԱՐՇԱԿ ՓԱՆՈՍԵԱՆ

Վերոյիշեալ նամակն շարունա-ծ էր երբ ստացանք մեր Լինի յա-տուէկ թղթակցէն՝ Պ. Ս...-է գը-րութիւն մը միեւնոյն ինքզի վե-րաբերեալ և աւելի ընդարձակ. բայց որովհետեւ միեւնոյն նիւթի վրայ երկու թղթակցութիւններ հրատարակելն աւելորդ կրնայ սեպ ուիլ, ուստի կը բաւականանաւք յիշեալ թղթակցութեամբ, զոր հրատարակած ենք շատ մը կէտեր ի բաց թողլով:

ԿՈՐՈՒՄԻ ՄԱՆԿԻԿԸ

Երէկ ոստիկան Օրայի 14րդ փողոցէն անցած ատեն պզտիկ աղջկ մը տեսաւ իւր վեց տարե-կան որ բարձրաձայն կուլար հե-տաքրքրի բաղձութենէ մը շրջա-պատուած: Մանկիկը օտար լեզ-ուաւ բան մը կըսէր իրեն հար-ցում ուղղողներուն, բայց ոչ ոք չէր հասկնար անոր ըսածներն. միայն սա յայտնի կերեւէր թէ նա կորուսած էր, և անկարող ծը-նողաց տունն գտնելու: Ոստի-կանն փայփայելով կորուստն ա-նոր ձեռքէն բռնեց ու հետը ոս-տիկանատուն տարաւ. հոն եւս ոչ ոք կրնար հասկնալ մանկիկի լեզուն ոստիկանապետն հրաման ըրաւ մանկիկն խուզարկել տեսնելու հա-մար թէ նշան մը կամ բան մը կա՞ր իւր վրայ իւր ծնողաց անունն կամ հասցէն նշանակող: Ոստիկանք ոչինչ գտան կորուսեալին վրայ, բայց քիչ մը շաքարեղէններէ որք թերթ մը Հին ԱՅՍՏՈՒԹԻԻՆԻ մէջ փաթեւած էին: Ոստիկանապե-տն որոյ անձանօթ էր ԱՅՍՏՈՒԹԻԻՆԻ, անմիջապէս հրաման ը-րաւ որ մանուկն նոյն թերթի խմբ-ագրատունն տանին: Ոստիկանք կատարեցին իրենց վերատեսչի հը-րամանն և ԱՅՍՏՈՒԹԻԻՆԻ մի Հին թերթի շնորհիւ կորուսեալ ման-կիկի ծնողաց տունն գտան գիւ-րութեամբ:

Կը հրատարակուի 15 օրը մէկ անգամ. բաժանորդագրին է մէկ տօլար: Այժմեան նոր հասցէն է 433 ՓԸՐԼ փողոց, Նիւ Եորք

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

ՃԳՆԱԻՈՐ ԷՂՕ

(Շաբ. տե'ս թիւ 55)

Բ.

— 0 —

— Շնորհակալ ենք, աղաղա-կեց եղօն, — շնորհակալ ենք, որ դու լսեցիր...:

— Բայց, ընդհատեց նրան քա-հանայն՝ շարունակելով, — հեռա-նայու համար նա 500 ոսկի է պա-հանջում գիւղից...:

— Այն Աստուած... մրմնջեց եղօն գլուխը խոնարհեցնելով:

— Ուստի, շարունակեց քա-հանան, — ամեն տան վրայ 5 ոս-կի նշանակուեց, որ մի շաբաթ-ուայ մէջ այդ տանն գիւղապե-տին տան. 500 ոսկին պէտք է ժո-ղովուի, աւագակի բերանը ձգուի որ երթայ...:

— Ո՞ր տեղից տանք... գոչե-ցին գիւղացիները ամեն կողմից:

— Այո՛, ո՞ր տեղից... մրմնջաց եղօն և նրա՝ դէպի գետին դար-ձըրած՝ աչքերից երկու կաթիլ արցունք գլորուեցին այտերի վը-րայ:

— Ես գիտեմ, որդիք, մէջ մասւ քահանան. — ես էլ պիտի տամ. էլ ի՞նչ անենք, կամ պիտի լռենք և դիմանանք—որը անկարե-լի է — և կամ պիտի ամեն ունե-ցածին ծախենք և ճարենք 5 ոս-կին:

Եւ լռեց:

Եղօն ոտքի ելաւ, առաւ չա-րուխները, ձեռքը բարձրացրեց, որ եկեղեցուց ելնելիս վերջին ան-գամ խաչակնքէ, բայց բարձրա-ցըրած ձեռքը ցած ընկաւ... մի քանի երեքուն քայլեր արեց, երե-սը սեղանին դարձրեց, փորձեց աղօթել:

— Տէ՛ր... ուղեց ասել, բայց ձայնը կտրեց և դուրս թռաւ ե-կեղեցուց, յուսահատութեամբ նստեց մի քարի վրայ և մտածեց:

— Ո՛ւ՛մ աղօթեմ. էլ ո՞վ պի-տի լսէ մեզ...:

Սոսկմամբ ընդհատեց մտա-ծութիւնը, վախենալով հետեւող խօսքերից. ընկաւ ծնկան վրայ և դառնապէս արտասուելով, ասաց.

— Ների՛ր, Աստուած իմ, քիչ մնաց մոռանայի քեզ... ախր, Աստուած, դու էլ շատ լսեցիր է՛, շատ անգութ մնացիր. է՛՞ որ մենք էլ մարդ ենք, մե՛զ էլ դու ստեղծեցիր, մենք էլ հաւատա-ցինք քո որդի Յիսուսին, մենք էլ անդադար աղօթում ենք քեզ և սկզբից շնորհակալ լինում մեզ անելիք բարութիւններէդ համար:

ԺԱՄԱՆԱԿԸ ԴՐԱՄ Է

ԻՍԿ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆՆ

ՄՏԱՏԱՆՋՈՒԹԵԱՆ ԴԱՐՄԱՆ

Կ. ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

53 CEDAR ST. N. Y.

Կիւլպէնկեան տունն որ հանրածանօթ է ամէն տեղ, վաճա-ռականական ճիւղ մ'ալ Նիւ Եորքի մէջ հաստատած լինելով՝ փոխա-նակազրեք ևս կուտայ Եւրոպայի գլխաւոր իսկ Թուրքիայի ամէն քա-ղաքաց համար: Ամերիկեան Հայ գաղթականք որք փոխանակազրեք գնելու համար միշտ դժուարութեանց բաղկած ու փամառակի կո-րուստ ունեցած են տեղական դրամատանց դիմելով, այսուհետեւ դիւրութեամբ և առանց ու է կորուստի պիտի կարողանան այս վա-ճառականական տան փոխանակազրեքներն ձեռք ձգել անձամբ կամ նամակաւ դիմելով Տ. Կ. Կիւլպէնկեանի վերոյիշեալ հասցեով:

Նիւ Եորքի դուրս բնակող անձինք դժուարութեան չի բաղ-լսելու համար կրնան իրենց յղելի դրամն իւրեանց քաղաքի դրամա-տունն. դնել և անկէ չէք մը առնելով յղել յիշեալ հասցէին, ուրիշ պիտի ընդունին անոր փոխարէն խնդրուած փոխանակազրեքն վերա-դարձ թղթատարով:

Աւելի մանրամասնութեան համար դիմել հետեւեալ հասցէին

GULLABI GULBENKIAN & Co.

53 Cedar St. New York City,

Մ Ե Շ Պ Ա Տ Ե Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅ ՈՍՏԱՅՆԱՆԿԱՑ ՀԱՄԱՐ

ԿՈՒՋՈՒԻ ՄԵՏԱՐԻՍ (ԱՅՆ ԳՈՐԾ) ՈՍՏԱՅՆԱՆԿՆԵՐ ՆԻԻ ԵՈՐԴԻ ԴՈՒՐՍ ԵՐԹԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾ

ԳՈՂԱՑՈՒՑԻՉ ՇԱՐԹԱԿԱՆ ՎԱՐՁԲ

Ընկերութիւնն կը վճարէ ճանապարհի և այլ կարեւոր ծախքերն երթալու համար:

ԿԸ ՎՍԱՆԱՅՆԻ ԹԷ ԳՈՐԾՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԼԱՒ ԵՒ ԳՈՂԱՑՈՒՑԻՉ

Երթալու փափաք ունեցողներն պարտին դիմել հետեւեալ տեղին,

ՃՈՆ Հ. ԸՍԹՐՐԸՆ ԵՒ ԸՆԿ.

213 Արեւելք, 42րդ փողոց

(Մետաքսի գործարանն)

ՆՈՐ ՀԻ ԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԵՆԱՆ

Այս երգարանն որ իւր տեսա-
կին մէջ մինչ ցարդ տպուածներէ
թէ՛ գերազանցն և թէ՛ ամէնալո-
ղարձակն պիտի լինի, մաքուր
թղթի վրայ ընտիր տպագրու-
թեամբ: Բոլոր գիրքն պիտի լրա-
նայ իւր երկու ամիսէն:

Հասարակութեան թախան-
ձանաց համեմատ որոշած ենք իւր
500 օրինակ ֆօրմա առ ֆօրմա
ծախել: Մէն մի ֆօրմա 16 երեսն է
բաղկանայ և կարծէ երկու սէնթ:
Ամբողջ գրքին գինն է 50 սէնթ,
75 սէնթ և մէկ տողար՝ կազմին
համեմատ:

Սոյն ֆօրմաներէն գնել ու-
զողներ կրնան դրամն յղել խմբա-
գրութեանս փոսթայի գնոյն հետ
մէկտեղ: Մէկէ աւելի օրինակ գը-
նողներէ ձամբու ծախք չի պա-
հանջուիր:

ՀԱՅՐԻԿԻ ՊԱՏԿԵՐԸ

Հ. Հ. Մ. Նիւ Եօրքի Օթեակը
չինել տուած է ՀԱՅՐԻԿԻ փառա-
ւոր պատկերներն ընտիր քարտի
վերայ մաքուր տպագրութեամբ:
Կը վաճառուի իմբագրութեանս
քով հատը 10 Սէնթի:

Ա. Ջ. Դ.

Անգղիերէն և Գաղիերէն դաս
առնել փափաքող անձինք կրնան
գիրքամատչելի գնով այցելու դա-
սատու մը գտնել չաբաթը երեք
գիրքի համար: Փափաքողք պար-
տին դիմել հետեւեալ հասցէին
Գասատու, ԱՋԱՏՈՒԹԻՒՆԻ
խմբագրութեան միջոցաւ:

Ս. Ա. ՍԱՄՈՐԱՆ

107 Ֆէտէրալ փողոց,
Փրօվիտէնս Բ. Ա.

Պատու ունի ծանուցանել ար-
գոյ Հայ հասարակութեան թէ
գործակալն լինելով չորհրդակցին
հաշակաւոր ընկերութեան մը,
գիրքութիւն ունի ամէն կարգի
տոմսակներ վաճառել Եւրոպայի
ամէն քաղաքներու համար և թէ
փոխադրածար:

Գինքն խիստ գերադասուի
են: Փափաքողք պարտին դիմել
հետեւեալ հասցէին:

S. A. SAMOOR.

107 Federal st, Providence, R. I.

Վ. Կ. ԲԱՐԱԿԵԱՆ

Ուսթըր, Մաս.

Կը հրաւիրէ իւր հայրենակից-
ներն հանդերձեցնենք կամ գը-
լարի գնելու համար նախ գիմել

Bay State clothing Co.

ընկերութեան վաճառատունն ի
թիւ 46 և 48 Ֆլորենթ Ըսթրիթ,
որ ինքն ամէն Շաբաթ երեկոյներ
ներկայ լինելով մասնաւոր հոգ կը
տանի Հայ յաճախորդաց:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱԼԻ ԱՆԳՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
ՄԱՍՆ Ա.

Նիւ Եօրք — Տպգր. ԱՐԱՐԱՏԵԱՆ
Գրեց

ԱՐԱՄ ԱՅՎԱԾԱՆ

Գին 25 սէնթ

Կը յանձնարարենք այս փոք-
րիկ մատանն Անգղիերէն ուսա-
նիլ փափաքողաց, որք լաւ բա-
նալի մը կը գտնեն անոր մէջ Անգ-
ղիերէն լեզուի գոնեան բանալու
համար:

Գնել փափաքողք պարտին
գիմել հեղինակին հետեւեալ հաս-
ցէին:

A. AYVADIAN
49 Columbus Ave. N. Y.

Ա. Ջ. Դ.

Ի նպատակ Հայ երիտասարդաց
Թանգարանի Միութեան կը ծախ-
ուին:



1. Բաժնի վերի պատկերին
խոշորագիրը, տանըմէկ ու կէս
մատնաչափ երկայն և ութ մատ-
նաչափ լայն: Գին 10 սէնթ:
Գում Գափուի Հերոսներու
պատկերը:

2. Յարութիւն Չունգուլեան
3. Կէմալաթ Մանուկ
երկուք 5 սէնթի

Գնել փափաքողներ կը պար-
տին գիմել Միութեանս Թանգա-
րանակներին կամ նորա գործա-
կալաց և կամ ԱՋԱՏՈՒԹԻՒՆԻ ԼԵ-
րագրի խմբագրատունը:

Փոստի ծախքը մեր վրայ է:
Պետրոս Թորոսեան
Թանգարանակալ
779 Երկրորդ ափսիս Նիւ Եօրք

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼ ԵԱՆԻ
Դրած ոտանաւորներէն

Մ. Փորթուգալեանի դրած
Հայրենասիրական ոտանաւորներէ
մի քանին ամփոփուած են այս
տետրակի մէջ իւրեւ նմոյշներ դա-
նաղան քաղաքների մէջ և զանա-
զան տպագրութիւնների տակ
իւր երեւմի գրած ոտանաւորնե-
րին որոնք ժամանակին հրատա-
րակուած չը լինելով կորսուած
են այժմ: Այն մի քանի ոտանա-
ւորներ որոնք իւրեւ նմոյշ ամ-
փոփուած են այս տետրակի մէջ:
ցիր ու ցան կը գտնուին Կ. Պօլիս
տպագրութեան աղբային երգարան-
ների մէջ որոց վերտին տպա-
գրութիւնն վաղուց արդէն ար-
գիւլուած է և «Արիս» և «Արմենիա»
Լրագիրներին մէջ: Նմոյշների մէջ
փոքրիկ տեղեկութիւններ տը-
րուած են նաև թէ այդ ոտանա-
ւոր ինչ տպագրութիւնների տակ
ներշնչուելով գրուած են:

Գինն է 15 սանթիմ:

Ա. Ջ. Դ.

Հայ երիտասարդաց Թանգա-
րանի Միութեան ինքնակալու-
թիւնն պատու ունի ծանուցանել
թէ ի գիրքութիւն ընթերցասէր
Հասարակութեան հետեւեալ գոր-
ծակալութիւններն հաստատուած
են Նիւ Եօրքի, չը կապուի և այլ
քաղաքներու մէջ:

- Տ. Մ. Տաղեան, Նիւ Եօրք 779 Երկ. Ավ.
- Տ. Յ. Աղաթեան, Նիւ Եօրք.
- 432 Ուէսթ 56րդ Փողոց
- Տ. Մ. Շիշմանեան, 91 Մատիւրն Փողոց Նիւ Եօրք
- Տ. Յ. Համալեան, Ն. Ե. 43 Սանտ Փղոց Պրուքլին
- Տ. Յ. Պատմաճեան, Քոլէճ Փոյնթ, Լ. Ա.
- Տ. Կ. Չանգալեան, 455 Փալատ Ավ. Ճէրզի Սթրիթ Հայթս, Ն. Ճ.
- Տ. Պ. Տէյրմանճեան, 313 Ուէսթ Բուրիթ, Ուէսթ Հոլլըքն Ն. Ճ.
- Տ. Յ. Չուճեան, Փաթլըքն, Ն. Ճ.
- Տ. Յ. Թօփրահանեան, Ֆիլատէլֆիա, Փէնս.
- Տ. Յակոբ Թոփրահանեան, Մալլոր և Թըրնքիլլ, Քօնն.
- Տ. Տ. Պոհարարեան, Փրօվիտէնս, Բ. Ա.
- Տ. Կ. Սօպաճեան, Եօնքըքն, Ն. Ե.

F. SCHAU, Binding & Mailing Co.



431 Palisade Avenue, JERSEY CITY N. J.

Open day and night


Equinox

Binding & Mailing Co.

438 Pearl Street,

NEW YORK.

Open day and night.



ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Այն ամէն Հայերն որք կը փա-
փաքին դրամ զրկել իրենց բարե-
կամաց ի Թուրքիա կամ ի Յունաս-
տան, 25 Գրանք դրամատան փո-
խանակագրիներն պիտի գտնեն ա-
մենաապահով, ամենաաժան և
լաւագոյն:

MATHEWS & CO., BANKERS.
No. 2 Wall St. New York

Scott Printing Company,

JOHN SCOTT, Manager.

NTERS,

PRESS ROOMS:
220 William St., NEW YORK.
Presses Running Day & Night.

ԷԿԵՆԱՆ ՏՊԱՐԱՆ

438 ՓԵՐԼ ՓՈՂՈՑ

Այս տպարանն որ իւր տեսա-
կին մէջ անդրանիկն է ի Միաց-
եալ Նահանգս, այժմ աւելի ըն-
դարձակած ու ճոխացած է նոր
տառերով ու տպագրական պէտ-
քերով, անանկ որ կարելի է գո-
հացուցիչ ու հափաւոր գնեցող տը-
պագրել Գրքեր, Լրագիր, Տեա-
րեր, Այցեւորման, Պահարաններ,
Փոխանակագրեր, Լէն. Լէն.

Նմանապէս այս տպարանն դի-
րութիւն ունի տպագրել Անգլիե-
րէն մանր տետրակներ և ամէն տե-
սակ փոքր գործեր, ինչպէս են,
Այցեւորման, Պահարան, Անգորա-
գիր, Լէն. Լէն.

Տպագրութեան մաքրութիւնն
ապահովուել է: ԷԿԵՆԱՆ տպա-
րանն տեղական տպագրիչներու
մէջ գիրք մը բռնելու համար, ո-
րչաժէ մասնաւոր հոգ տանել
այս մասին առանց նկատի առնե-
լու շահու սրբանութիւնն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ
Ա. Ջ. ԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՅԺՄ
ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳ ՕՐԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ

Տարեկան բաժանորդագինն մէկ
տողար մ'է միայն,

ԿԱՄ ԵՐԵՎ ՕՐԸ ՄԷԿ ՍԷՆԹ.

Ամէն մէկ թուի մէջ
իմբագրական յօդուածներ, Թը-
թալցութիւններ, զուարճալիք և
այլ կարեւոր յօդուածներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ARMENIA

ANGLO FRENCH JOURNAL
Political & Literary

Published on 1st & 16th of
every month.

Editor: Minasse Tcheraz,
Ex-Armenian Delegate at the Ber-
lin Congress.
Address: 28 Bedford Place,
London, W. C. ENG.

I. A. ISAACS,

Տպագրչաց և կազմարարացի վե-
րաբերեալ մեքենաներ:

36 & 38 Beekman St.,

Նիւ Եօրք.

Ծան. - Երբ կը գնէք մի մոռանաք
ըսել թէ ծանուցումն ԱՋԱՏՈՒ-
ԹԻՒՆԻ մէջ տեսաք:

ԷԿԵՆԱՆ ԿԱԶՄԱՏՈՒՆ

438 ՓԵՐԼ ՓՈՂՈՑ

ԷԿԵՆԱՆ կազմատունն որ ա-
մենէ ընդարձակն է Հայ կազմա-
տուններու մէջ, և որ կը մրձի տե-
ղական շատ մը կազմարար ընկե-
րութեանց հետ, իւր շոգեշարժ
մեքենայից ու վարպետ կազմա-
րարաց շնորհիւ կարողացած է ա-
նուն ունենալ հրապարակի վրայ
և շահել պատուարեր համբաւ:

Այս կազմատունն իւր և
ընդարձակ գործատան մէջ նորա-
նոր կարգադրութիւններ ըրած է
աւելի ընդարձակ հիման մը վրայ
գործ ընելու համար: Հոս կը կազ-
մուին գրքեր և տետրեր ամէն
քանակութեամբ. կը ծալուին
թերթեր ու հանդէսներ Լէն. Լէն.
կարճ ժամանակի մէջ,

Գիները չափաւոր են, ամէն
տեսակ կազմի համար: Միանգամ
փորձողն ուրիշ կազմատուն մը չի
գիմեր բնաւ: Մի մոռնաք մեր
այժմեան նոր հասցէն որ է

438 Pearl St. N. Y.

ԲԱԶՄԱՎԵՐԸ
Ամսամերթ

ԽԹ. Տարի, 1891.

Տարեկան բաժանորդագինն է
տաղը Փր. (4 Բուրի). Հասցէն՝
Redaction de la revue "Basmavep",
Venise, Italie, St.

ՀԱՆԴԵՍԱՆ ԱՄՍՈՐԵԱՅ
ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ,
ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ.

Ե. Տարի 1891.

Տարեկան բաժանորդագինն է
10 Ֆր. (4 Բուրի). Հասցէն՝
Redaction de la Revue "Hantess",
Vienne, (Autriche).
VII Mechitaristengasse, 4.

ԱՐՄԷՆԻԱ.

Հունգարերէն Ամսամերթ.

ՊԱՏՄԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ
ԲԱՐՈՅԱԿԱՆ.

Բ. Տարի. 1891

Տարեկան բաժանորդագինն է
10 Ֆր. Հասցէն՝
Szongott Kristoff urnak,
Szamosi jvar (Hongrie).

ԱՐՄԷՆԻԱ

ԱՋԱՏԱԿԱՆ ԳԻՍՏԱԲԱՐԱՐՈՒԹԵՐՔ

ԱԶԳԱՅԻՆ, ԳԱՂԱԳԱԿԱՆ,
ԵՒՆ. ԵՒՆ.

Տարեկան բաժանորդագինն է
չորս տողար. Հասցէն,
Redaction du journal
"Armenia",
Marseille, France

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՍԿԾԱՆԲ

Գրեց
Հ. ԷԿԵՆԱՆ.

Հեղինակին ընտիր մէկ բա-
նաստեղծութիւնն է այս արձակ
գրուած, որ կը վաճառուի խմբ-
ագրութեանս քով հատը 5 Սէն-
թի սիւայն: